

**ԽՍՀՄ ՓԼՈՒՀՈՒՄԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ՀԱՐԱԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՁԵՒԱԴՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
1990ԱԿԱՆՆԵՐԻՆ**

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԵԱՆ

garshakyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Յօդուածը կ'անդրադառնայ ԽՍՀՄ փլուզումից յետոյ Թուրքիայի արտաքին քաղաքականութեան նոր գերակայութիւնների մշակման գործընթացին, նոր աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում յետխորհրդային տարածաշրջանում եւ յատկապէս Հարաւային Կովկասում նրա արտաքին քաղաքականութեան մէջ կտրուկ շրջադարձի հիմնական նախադրեալներին, դրդապատճառներին եւ զարգացման փուլերին:

Յօդուածում վերլուծուում են ռուս-թուրքական մրցակցութեան պայմաններում 1990ականներին Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում Թուրքիայի արտաքին քաղաքականութեան մէջ «Թուրքական մոդէլ»ի եւ պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնների դերը եւ նշանակութիւնը, այդ գաղափարների իրագործման գործընթացում Թուրքիայի ձեռքբերումներն ու բացթողումները:

Դիտարկուում է նաեւ Թուրքիայի հարակովկասեան քաղաքականութեան մէջ կարեւոր բաղադրիչ հանդիսացող թուրք-ադրբեջանական յարաբերութիւնները, դրանց զարգացմանը նպաստող հիմնական գործօնները:

Ա. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՒԱԴՈՐՈՒՄԸ

Հարաւային Կովկասը՝ որպէս աշխարհաքաղաքական տարածաշրջան, միշտ էլ մեծ հետաքրքրութիւն է ներկայացրել Թուրքիայի համար: 1920ականներին հարակովկասեան տարածաշրջանի խորհրդայնացումից յետոյ Թուրքիան հարկադրուած էր իրաժարուել Կովկասի հանդէպ ունեցած նկրտումներից, քանզի դա յանգեցնելու էր Խորհրդային

Միութեան հետ անմիջական առճակատման: «Սառը պատերազմ»ի տարիներին ԽՍՀՄի հետ ընդհանուր սահմանի առկայությունը մեծապես բարձրացնում էր Թուրքիայի նշանակությունը Արեւմուտքի համար, քանզի «Սառը պատերազմ»ի շրջանակներում Արեւելք-Արեւմուտք հակամարտության պայմաններում Թուրքիան հանդիսանում էր կարեւորագոյն ռազմավարական եւ աշխարհաքաղաքական յենակետ Արեւմուտքի համար Արեւելքից սպառնացող սպառնալիքին դիմագրաւելու գործում: Մասնաւորապէս, խորհրդային վտանգից Արեւմտեան Եւրոպային պաշտպանութեան ընդհանուր համակարգում Թուրքիան դիտւում էր որպէս ՆԱՏՕի հարաւային թեւ¹:

1980ականների վերջին ԽՍՀՄ-Արեւմուտք հակամարտության թուլացման եւ ԽՍՀՄի փլուզման նախանշանների ի յայտ գալու պայմաններում Թուրքիայի համար առաջացան աշխարհաքաղաքական բարենպաստ պայմաններ: Մասնաւորապէս, միջազգային այս փոփոխությունների համապատկերում Թուրքիան սկսեց աշխուժացնել յարաբերությունները ԽՍՀՄ մահմեդական հանրապետությունների հետ: Մասնաւորապէս 1991ին ԽՍՀՄում տեղի ունեցած օգոստոսեան յեղաշրջման անյաջող փորձից յետոյ, երբ ԽՍՀՄում անջատողական գործընթացներն աւելի արագացան եւ ստացան անշրջելի բնոյթ, Թուրքիայի ղեկավարութիւնը հնարաւորութիւն ստացաւ աւելի աշխուժացնելու իր կապերը վերոյիշեալ հանրապետությունների հետ: Այդ կապակցութեամբ 1991 Սեպտեմբերին փորձառու դիւանագէտ եւ ճանաչուած պատմաբան Բիլալ Շիմշիրի գլխաւորութեամբ ԽՍՀՄ ուղարկուեց թուրքական պատուիրակութիւն, որն այցելեց խորհրդային թիւրքալեզու հանրապետություններ²: Պատուիրակութեան խնդիրն էր՝ պարզել այդ հանրապետությունների քաղաքական եւ մշակութային զարգացման հեռանկարները: Անկարան փորձում էր հասկանալ, թէ նրանք դէպի ուր են կողմնորոշուելու՝ Թուրքիա՞, թէ՞ Իրան³: Այցը ցոյց տուեց, որ 1991ին անկախութեան ուղին բռնած Կենտրոնական Ասիայի եւ Հարաւային Կովկասի թիւրքալեզու երկրների ղեկավարները մեծ ուշադրութիւն էին ցուցաբերում

դէպի Թուրքիան⁴: Այսպիսով, Թուրքիան 1990ականների սկզբներին վերանայում է տարածաշրջանային իր գերակայությունները՝ ձգտելով ներթափանցել Հարաային Կովկաս եւ Կենտրոնական Ասիա:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մէջ այդ նոր շեշտադրումների ի յայտ գալը պատահական չէր. վերոյիշեալ տարածաշրջաններ ներգրաւուելու համար Թուրքիան ունէր ներքին եւ արտաքին դրդապատճառներ: «Սառը պատերազմ»ի աւարտը Թուրքիան ընդունեց մեծ լարուածութեամբ եւ սպասումներով: Նա լրջօրէն անհանգստանում էր, որ «Սառը պատերազմ»ի աւարտի հետեւանքով կարող է կորցնել Արեւելք-Արեւմուտք հականարտութեամբ պայմանաւորուած իր աշխարհաքաղաքական նշանակութիւնը, ինչն իր հերթին կը յանգեցնէր տնտեսական եւ ռազմական օգնութեան ծաւալների կրճատմանը: Դրա առաջին դրսեւորումն էր Թուրքիային յատկացուող ռազմական օգնութեան չափերը կրճատելու մասին ԱՄՆ Կոնգրէսի կողմից 1990ին ընդունուած որոշումը⁵: Երկրորդ, 1989ին, Եւրոպական Համայնքի (ԵՀ) կողմից Թուրքիայի անդամակցութեան յայտի մերժումը հաստատեց թուրքերի մտահոգութիւնն առ այն, որ Եւրոպան յետխորհրդային աշխարհակարգի պայմաններում այլեւս չունէր Թուրքիայի կարիքը, որպէս ԽՍՀՄ հարաւային սահմանների մօտ իր յենարանի⁶: Եւ ի վերջոյ Հարաւային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի նորանկախ թիրաքալեզու հանրապետութիւնների վրայ իր ազդեցութեան օգնութեամբ Թուրքիան ցանկանում էր ոչ միայն վերականգնել իր ռազմավարական կարեւորութիւնը Արեւմուտքի համար, այլեւ օգտագործել այդ գործօնը ԵՀին վերջնական անդամակցութեան հարցում⁷:

Ներքին դրդապատճառները ունէին տնտեսական եւ քաղաքական բաղադրիչներ: Տնտեսական տեսանկիւնից նորանկախ իսլամադաւան հանրապետութիւնները թուրքական արտահանման համար հանդիսանում էին նոր շուկայ, ինչպէս նաեւ գազի եւ նաթի նոր աղբիւր էին, որոնց կարիքը խիստ զգում էր Թուրքիան⁸: Քաղաքական տեսանկիւնից 1989ին ԵՀ կողմից Թուրքիայի անդամակցութեան յայտի մերժումից յետոյ, Թուրքիայի հնարաւոր նոր դերը՝ որպէս թիրաքական

հանրապետությունների համայնքի ղեկավարի, էականորեն կը բարձրացնէր նրա միջազգային դիրքը, ինչպէս նաեւ կը լուծէր նրա մեկուսացման մտավախութեան խնդիրը⁹:

Այսպիսով, «Սառը պատերազմ»ի ժամանակաշրջանի կանոնների փոփոխութեան եւ Թուրքիայի համար վերոյիշեալ նոր աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում նրա արտաքին քաղաքականութիւնը ենթարկուեց կտրուկ շրջադարձի, վերանայուեց նրա տեղն ու դերը աշխարհում ընդհանրապէս, եւ տարածաշրջանում՝ մասնատրապէս: Դա յանգեցրեց նրան, որ ինչպէս Թուրքիայի ղեկավարութեան, այնպէս էլ հասարակական-քաղաքական մտքի շրջանակներում սկսուեց աշխուժօրէն քննարկուել նոր արտաքին քաղաքականութիւն մշակելու անհրաժեշտութեան հարցը: Սակայն այս գործընթացում Թուրքիայի առջեւ ծառացել էին որոշակի խնդիրներ: Արտաքին քաղաքական գերակայութիւնների որոշման հարցի շուրջ Թուրքիայում լուրջ քննարկումներ էին գնում, եւ առկայ էին տարբեր դիրքորոշումներ՝ նոր աշխարհակարգի պայմաններում Թուրքիայի դերակատարութեան վերաբերեալ:

Բ. ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1990ԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ

Թուրքիան, գտնուելով իր արտաքին քաղաքական գերակայութիւնների ընտրութեան կողմնորոշման գործընթացում, իր առջեւ ունէր յետագայ զարգացման հիմնական երեք ուղղութիւն: Արդիականացման կողմնակիցները ցանկանում էին Թուրքիան տեսնել որպէս եւրոպական պետութիւն, հետեւաբար նայում էին դէպի Արեւմուտք: Ծայրայեղ իսլամիստները հակուած էին դէպի Մերձատուր Արեւելք եւ մահմեդական թիրաքալեզու համայնքները, ուստի նայում էին դէպի Հարաւ: Անդրադառնալով պատմութեանը՝ ազգայնականները թիւրք ժողովրդների նոր դերակատարութիւնը տեսնում էին կասպիական աաազանի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում՝ նայելով դէպի Արեւելք: Այս երեք ուղղութիւնների կողմնակիցների բախումները

յանգեցնում են որոշ անվտանգության Թուրքիայի տարածաշրջանային դերի հարցում¹⁰:

Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր գերակայությունների մշակման գործընթացում 1990ականների սկզբներին աշխուժացան «Եւրասիական», ուղղութեան կողմնակիցները, ինչի արդիւնքում 90ականների սկզբներից երկրի քաղաքական քննարկումներում կարելու տեղ գրաւեց «Եւրասիայի ռազմավարութիւնը», որը համարում է Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարութիւնը:

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական եւ գաղափարական քննարկումներում «Եւրասիա» եզրին աւելի շուտ տրւում է քաղաքական, քան թէ յստակ գիտական իմաստ: Մասնաւորապէս, Թուրքիայի նախկին նախագահ Սուլէման Դեմիրէլը վերոյիշեալ տարածաշրջանի բաղկացուցիչ մաս էր համարում Բալկանները, Կովկասը, Կենտրոնական Ասիան, Մերձատուր Արեւելքը, Թուրքիան, Իրանն ու Իրաքը, իսկ նախկին փոխվարչապետ եւ պանթիւրքիստական Ազգային Շարժում Կուսակցութեան նախագահ Դեվլէթ Բահչէլին Եւրասիայի կազմում ներառում է Բալկանները, Կովկասը եւ Մերձատուր Արեւելքը¹¹:

Թուրք վերլուծաբաններն ու հետազոտողները, օգտագործելով Եւրասիայի վերաբերեալ արեւմտեան հեղինակների դասական աշխարհաքաղաքական մօտեցումները, փորձեցին կազմել սեփական ռազմավարութիւնները, որոնք էապէս տարբերում էին արեւմտեան հեղինակների տեսակէտներից: Մասնաւորապէս, Մարմարա Համալսարանի պրոֆեսոր Ռամզան Օզէլը նախապատրաստել էր «Թուրքերի կենտրոնական գերիշխանութեան» հայեցակարգը, ըստ որի, «Անատոլիան հանդիսանում էր «Աշխարհի ամրոցը», ուստի Թուրքիան, տիրապետելով Անատոլիան, հնարաւորութիւն է ստանում վերահսկելու Բալկաններն ու Եւրասիան: Սրանով իսկ Օզէլը, հաշուի առնելով Թուրքիայի աշխարհագրական դիրքը, օրինականացնում էր Թուրքիայի գերիշխանութիւնը Բալկաններում եւ Եւրասիայում»¹²:

Թուրքիայի քաղաքական վերնախաւում նոր արտաքին քաղաքականութեան ձեւաւորման գործընթացի շուրջ

քննարկումներն անլի աշխուժացան 1991 Դեկտեմբերին, Խորհրդային Միության փլուզումից յետոյ:

Թէեւ ԽՍՀՄի եւ Արեւմուտքի միջեւ մերձեցման գործընթացը թուրք քաղաքական գործիչների մօտ ստեղծեց մեկուսացման եւ խոցելիության զգացումներ, մեր կարծիքով, Խորհրդային Միության փլուզումը Թուրքիային նոր ռազմավարական հնարատրություններ ընձեռեց: Համայնավար վարչակարգի տապալումը Ռուսաստանում, Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում կրօնական եւ էթնիկական յատկանիշներով Թուրքիայի հետ ընդհանրություն ունեցող հանրապետությունների ի յայտ գալն Անկարայի համար ստեղծեց բարենպաստ պայմաններ: Ըստ թուրք գիտնական Օմէր Քոջամանի՝ «Յեթխորհրդային աշխարհակարգը Թուրքիայի համար նոր աշխարհի քացեց, իսկ դրա հետ մէկտեղ՝ հնարատրություն՝ դուրս գալու երկակի մեկուսացումից. մի կողմից Եւրոպայից, որն իրեն մերժել էր, միւս կողմից՝ արաբական Արեւելքից, որն իրեն չէր ընդունում»¹³:

Հարաւային Կովկասը աշխարհատնտեսական, ռազմավարական եւ անվտանգութեան տեսանկյունից մեծ կարեւորութիւն էր ներկայացնում Թուրքիայի համար: Թուրքիան սկսեց աշխուժ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու Հարաւային Կովկաս: Այդ ուղղութեամբ նրա առաջին քայլերից մէկը եղաւ Ադրբեջանի եւ Վրաստանի հետ սերտ յարաբերութիւններ հաստատելու քաղաքականութիւնը:

Հարակովկասեան տարածաշրջանում Թուրքիայի աշխարհատնտեսական շահերը մեծապէս պայմանաւորուած էին Թուրքիայի ձգտումով ոչ միայն ձեռք բերելու իր արդիւնաբերական ապրանքների արտահանման նոր շուկաներ, այլեւ բաւարարելու իր տարէցտարի աճող ջերմութի պահանջարկն ի հաշիւ կասպիական եւ կենտրոնասիական տարածաշրջանի նաւթի եւ գազի պաշարների: Թուրքիայով վերոյիշեալ տարածաշրջանի ջերմութի աղբիւրների դէպի Եւրոպա տարանցման երթուղիների ստեղծումը կը բարձրացնէր Թուրքիայի ռազմավարական նշանակութիւնը որպէս կամուրջ Արեւմուտքի եւ կասպիական ու կենտրոնասիական տարածաշրջանի միջեւ: Քանի որ ճանապարհը դէպի Կասպից

Ծով եւ Կենտրոնական Ասիա ընկած էր Հարաւային Կովկասով, Թուրքիան շահագրգռուած էր այդ տարածաշրջանների քաղաքական կայունութեամբ եւ այդ իսկ պատճառով Ադրբեջանի եւ Վրաստանի անկախութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը համարում էր իր ռազմավարական նպատակներից մէկը¹⁴:

Այս համապատկերում անվտանգութեան տեսանկիւնից թէեւ Թուրքիայի համար խորհրդային վտանգը վերացել էր, այնուամենայնիւ Հարաւային Կովկասում ընթացող ազգամիջեան հակամարտութիւնները պարունակում էին տարածաշրջանում երկարատեւ անկայունութեան լուրջ վտանգ: Սա, անկասկած, անցանկալի էր ոչ միայն Թուրքիայի, այլեւ նրա արեւմտեան գործընկերների համար: Այս համապատկերում, ինչպէս նշում է Ելենա Ուտագովան. «Թուրքիան, ջանալով աշխուժօրէն ներգրաւուել յետխորհրդային տարածաշրջանում ընթացող գործընթացներին, փորձում էր ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում: Դրանով իսկ Թուրքիան ցանկանում էր ՆԱՏՕի հարաւային յենակէտից դառնալ Արեւմտեան եւ Եւրասիական աշխարհները կապող աշխարհաքաղաքական եւ աշխարհադիմութեան կամուրջ՝ բարձրացնելով իր կարգավիճակը Արեւմուտքի աչքերում որպէս տարածաշրջանում նոր համընդհանուր միությունների «ուղեկցորդ»¹⁵:

Գ. «ԹՈՒՐԲԱԿԱՆ ՄՈՂԷԼ»Ի ԳԱՂԱՓԱՐԸ ՈՐՊԷՍ
ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ԲԱՂԱԴԻԻՉ

Թուրքիան Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում իր քաղաքականութիւնն իրականացնելիս ստացաւ Արեւմուտքի աջակցութիւնը, որի դրդապատճառների մասին են վկայում 1992 Նոյեմբերին ԱՄՆի լրատուամիջոցների հրապարակումները. այնտեղ նշում էր, որ Թուրքիան փորձում էր օգնել նոր մահմեդական երկրներին դառնալու աշխարհիկ պետութիւններ՝ կամրջի դեր կատարելով Արեւմուտքի, Բալկանների եւ Մերձատուր Արեւելքի միջեւ: «Տարածաշրջանում, որտեղ խոր էջնիկական հակասութիւններ ու թշնամութիւն կայ,

Թուրքիայի հետ բարեկամությունը կենսական նշանակություն ունի Արեւմուտքի համար»¹⁶:

Յետխորհրդային ժամանակաշրջանում Թուրքիայի աշխարհաքաղաքական եւ ռազմավարական նշանակութեան մեծացումը եւ Արեւմուտքի կողմից այդ փաստի ընդունումը որոշիչ գործոններ հանդիսացան Թուրքիայի արտաքին քաղաքական ուղու ձեւաւորման գործում: Օգտուելով Ռուսաստանի դիրքերի եւ ազդեցութեան էական թուլացումից եւ ունենալով Արեւմուտքի աջակցությունը՝ Թուրքիայի ղեկավարները սկսեցին յաակնոտ յայտարարություններ անել, թէ իբր Թուրքիայի գլխաւորութեամբ ստեղծուելու է 120 միլիոն թիւրքալեզու բնակչութեամբ նոր թիւրքական աշխարհ: Մասնաւորապէս, Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալն, ի լուր աշխարհի յայտարարեց, որ 21րդ դարը լինելու է «թիւրքական դար»¹⁷:

Աւելի ուշ նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւններ իր այցելութեան ժամանակ Թուրքիայի վարչապետ Դեմիրէլը յայտարարեց, որ նոր թիւրքական աշխարհ եւ նոր քարտէզ է ձեւաւորում: Հինգ նոր դրօշներ իրենց կիսալուսիններով աւելացել են Թուրքիայի դրօշի կողքին: Մեծ թիւրքական աշխարհը տարածուելու է Ադրիատիկից մինչեւ Չինական Ծով¹⁸:

Թուրքիայի պետական շրջանակներում տիրող այս ոգեշնչման պայմաններում կրկին վերածնուեց այսպէս կոչուած «թիւրքական միասնութեան» գաղափարը, որը 1990ականների սկզբներին աշխուժօրէն քննարկում էր թիւրքական մամուլում: Մասնաւորապէս, *Ենի Ֆորում* ամսագրի էջերում տեղ գտած «Ուշադրութիւն Դէպի Թիւրքական Աշխարհը» վերնագրով ծաւալուն յօդուածում վերլուծում են այն լծակները, որոնք Թուրքիան կարող է օգտագործել ներթափանցելու համար նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւնները: Մասնաւորապէս առանձնացում էր կրօնական գործօնը¹⁹:

Յօդուածում նշում էր, որ Թուրքիայի ամենամեծ խնդիրներից մէկն այն է, որ իր արտաքին քաղաքականութեան մէջ նա երկարատեւ միայնութեան մէջ է եղել: Ըստ յօդուածագրի, Թուրքիան չի պատկանում ո՛չ արաբական աշխարհին, ո՛չ Եւրոպային, ո՛չ սլաւոնական, ո՛չ էլ անգլօ-սաքսոնական աշխարհին: Լինելով մուսուլման՝ թիւրքերը չեն կարող վստահել

քրիստոնեաներին, լինելով աշխարհիկ պետութիւն՝ դուրս են մնում նաեւ իսլամական աշխարհից: «Մեր միակ յոյսը մեր թիրաբալեզու եղբայրներն են»²⁰:

Աշխարհաքաղաքական որոշ փոփոխութիւնների համապատկերում Թուրքիան մեծապէս փորձեց օգտուել այն հանգամանքից, որ ԽՍՀՄի փոխարէն Հարաւային Կովկասում յայտնուեցին երեք նորանկախ հանրապետութիւններ՝ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, իսկ Կենտրոնական Ասիայում՝ հինգ մահմեդական հանրապետութիւններ՝ Ղազախստանը, Ղըրղզստանը, Ուզբէկստանը, Թուրքմէնստանը եւ Տաջիկստանը, որտեղ ԽՍՀՄ փլուզումից յետոյ առաջացել էր քաղաքական թափուր: 1990ականներին այդ թափուրը լցնելու համար լուրջ մրցակցութիւն կար Թուրքիայի եւ Իրանի միջեւ: Այդ մրցապայքարում Արեւմուտքն էական աջակցութիւն ցուցաբերեց Թուրքիային, քանզի Արեւմուտքը լուրջ մտաւախութիւն ունէր, որ նորանկախ իսլամադաւան երկրները կարող էին ընկնել իրանական իսլամիստական վարչակարգի ազդեցութեան տակ: Ուստի ԱՄՆի կողմից առաջ քաշուեց «թուրքական մոդէլ»ը²¹, որպէս հակակշիռ իրանական կրօնապետութեան²²:

«Թուրքական մոդէլ»ը, ըստ էութեան, մեծամասամբ մահմեդական բնակչութիւն եւ ժողովրդավարական համակարգ ունեցող աշխարհիկ պետութիւնն էր, որը սերտօրէն համագործակցելու էր Արեւմուտքի հետ:

Առաջ քաշելով «թուրքական մոդէլ»ի գաղափարը՝ ԱՄՆը ցանկանում էր իր ամենավստահելի դաշնակիցներից մէկի՝ Թուրքիայի, օգնութեամբ ոչ միայն վերացնել իրանական սպառնալիքը յետխորհրդային տարածաշրջանում, այլեւ օգտագործել Թուրքիան՝ հասնելու իր գլխատուր նպատակներից մէկին՝ հնարաւորինս թուլացնելու Ռուսաստանի ազդեցութիւնը նորաստեղծ ԱՊՀ տարածաշրջանում: Այս հարցի շուրջ Թուրքիայի եւ ԱՄՆի շահերը համընկնում էին, քանզի Թուրքիան ոչ միայն էապէս շահագրգռուած էր ամրապնդելու իր դիրքերը Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում, այլեւ հանդէս գալու, որպէս Ռուսաստանին հակակշռող գործօն՝ յետխորհրդային տարածաշրջանում: Ուստի Թուրքիան ողջունեց Արեւմուտքի դիրքորոշումը, ինչը հնարաւորութիւն էր ընձեռնում

նրան ամրապնդելու իր դիրքերը միջազգային թատերաբեմում, մասնատրապէս՝ Ռուսաստանի եւ Իրանի հետ տարածաշրջանային մրցապայքարում:

«Թուրքական մոդէլ»ի իրականացման գործընթացում 1990ականների հենց սկզբից Թուրքիայի եւ թիւրքալեզու երկրների միջեւ նկատուում են մերձեցման մեծ ներուժ եւ ձգտումներ: Թուրքիան, լինելով ՆԱՏՕ-ի անդամ եւ վայելելով Արեւմուտքի աջակցութիւնը, բացառիկ հետաքրքրութիւն էր ներկայացնում նորանկախ թիւրքալեզու մահմեդական հանրապետութիւնների համար: Ուստի Թուրքիայի աշխուժ ներթափանցումը վերոյիշեալ երկրներ՝ սկզբնական շրջանում վայելում էր տեղի իշխանութիւնների աջակցութիւնը, քանզի նրանք Թուրքիայի օգնութեամբ ձգտում էին ոչ միայն զարգացնել իրենց տնտեսութիւնները, Արեւմուտքից ստանալ ֆինանսական աջակցութիւն, այլ նաեւ համարկուել եւրատլանտեան կառոյցներ²³:

Թուրքիան նոյնպէս գործնական քայլեր էր ձեռնարկում՝ զարգացնելու իր յարաբերութիւնները նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւնների հետ: Մասնատրապէս, 1991 Հոկտեմբերին Թուրքիայի Արտաքին Գործերի Նախարարութիւնում յատուկ բաժին է ստեղծուում, որը պէտք է զբաղուէր նորանկախ թիւրքալեզու հանրապետութիւնների հետ յարաբերութիւններով²⁴: 1992ի սկզբներին Թուրքիան հիմնեց Թուրքական Համագործակցութեան եւ Զարգացման Գործակալութիւնը, որի նպատակն էր բարելաւել յարաբերութիւնները թիւրքալեզու հանրապետութիւնների հետ²⁵:

Թուրքիան մեծապէս շահագրգռուած էր զարգացնելու տնտեսական յարաբերութիւններն ԱՊՀ թիւրքալեզու երկրների հետ: Մասնատրապէս, Թուրքիայի կողմից հիմնադրուած Թուրքական Առեւտրի եւ Զարգացման Բանկը միլիոնաւոր դոլարների վարկեր էր տրամադրում նորանկախ երկրներին: Թուրքական ընկերութիւններն աշխուժօրէն ներգրաւուած էին նորանկախ հանրապետութիւնների հեռահաղորդակցութեան, շինարարութեան եւ այլ ոլորտներում: Բացի այդ, 1993ին Թուրքիայում հիմնուեց նախկին ԽՍՀՄ թիւրքալեզու հանրապետութիւնների հետ տնտեսական կապերի հարցերով յատուկ

նախարարություն²⁶: Թուրքիան նաեւ մեծ ելեւմտական ներդրումներ էր անում մահմեդական հանրապետություններում: 1990ականների սկզբներին նա ամելի քան 1 միլիարդ դոլարի վարկ էր բացել Կենտրոնական Ասիայի հանրապետությունների համար²⁷:

Թուրքիան, յետխորհրդային տարածաշրջանում իրականացնելով աշխուժ տնտեսական, ելեւմտավարկային քաղաքականություն՝ ձգտում էր հանդէս գալ որպէս կամուրջ Արեւմուտքի եւ Հարաւային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի միջեւ, որի ամենաակնառու դրսեւորումներից էր Թուրքիայի նախագահ Դեմիրելի յայտարարութիւնը, թէ Թուրքիան ԱՊՀ թիրաքալեզու հանրապետությունների համար ծառայում է որպէս «պատուիսան դէպի արտաքին աշխարհ»²⁸:

Այսպիսով, ԽՍՀՄ փլուզման առաջին տարիներին Թուրքիան, օգտուելով ստեղծուած նպաստատու պայմաններից, որոշակի յաջողութիւններ ունեցաւ Հարաւային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի նորանկախ թիրաքալեզու հանրապետությունների հետ յարաբերութիւնների զարգացման գործընթացում: Ակնյայտ է, որ «թուրքական մոդէլ»ի իրականացման միւս կարեւոր նպատակն ուղղուած էր յետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցութեան թուլացմանը: Ուստի Թուրքիայի աշխուժ քաղաքականութիւնը յետխորհրդային հանրապետություններում առաջացնում էր Ռուսաստանի լուրջ մտահոգութիւնը, որը յանգեցնում էր ռուս-թուրքական յարաբերութիւնների լարուածութեան:

Հաշուի առնելով 90ականների սկզբներին Արեւմուտքի եւ Թուրքիայի գնալով մեծացող ներգրաւածութիւնը յետխորհրդային տարածաշրջանում, Ռուսաստանում առկայ ներքաղաքական եւ ընկերա-տնտեսական ծանր իրավիճակը եւ արտաքին յարաբերութիւններում իր համար ոչ-բարենպաստ մթնոլորտը՝ Ռուսաստանը մշակեց արտաքին յարաբերութիւնների բնագաւառում նոր հայեցակարգային մօտեցումներ, որոնք 1993 Ապրիլին հռչակուեցին, իբրեւ պաշտօնական քաղաքականութեան հիմնադրոյթներ: Հենց այդ ռազմավարական մօտեցումներն էլ շուտով վերածուեցին ՌԴ հայեցակարգային քաղաքականութեան հիմնադրոյթների, որտեղ

էական նշանակութիւն էր տրուում ԱՊՀին²⁹: Ռուսաստանի քաղաքական եւ ռազմական ղեկավարները յայտարարեցին, որ ԱՊՀն հանդիսանում է Ռուսաստանի «կենսական շահերի ոլորտը»: Մասնաւորապէս, 1994 Փետրուարին Ռուսաստանի ԱԳ նախարար Անդրէյ Կոզիրեւը նշեց. «Մենք չենք կարող հեռանալ հարաւսկական տարածաշրջանից այսքան հեշտութեամբ: Մենք պատմական եւ աշխարհաքաղաքական շահեր ունենք այստեղ»³⁰:

Ռուսաստանը սկսեց աշխուժօրէն ներգրաւուել եւ ուժեղացնել իր ազդեցութիւնն ԱՊՀ երկրներում: Հարաւային Կովկասում իր դիրքերը վերականգնելու համար Ռուսաստանը օգտագործեց տարածաշրջանային հակամարտութիւնները, ինչը բխում էր ՌԴ արտաքին քաղաքականութեան հիմնադրոյթներից: Այսպէս, 1993 Նոյեմբերի 2ի ՌԴ նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով հաստատուեց ռուսական ռազմական վարդապետութիւնը, որտեղ որպէս առաջնահերթ նպատակներ, նշում էին հակամարտութիւնների եւ ռազմական գործողութիւնների կանխումը եւ խաղաղութեան հաստատումը³¹:

Ռուսաստանի աշխուժ ներգրաւուածութիւնն ԱՊՀ ողջ տարածաշրջանում յանգեցրեց նրան, որ Թուրքիայի դիրքերը սկսեցին թուլանալ: Սա անկասկած իր ազդեցութիւնն ունեցաւ «թուրքական մոդէլ»ի քաղաքականութեան վրայ, որն 1993-94ին գնաց ձախողման: «Թուրքական մոդէլ»ի քաղաքականութեան ձախողումը ունէր մի քանի պատճառներ:

Չնայած 90ականների հենց սկզբից թիւրքալեզու երկրների միջեւ մերձեցման մեծ ներուժին եւ ձգտումներին՝ միջինասիական հանրապետութիւնների յետագայ քաղաքականութիւնը վկայում է, որ վերջիններս, այնուամենայնիւ, գերադասեցին «թուրքական մոդէլ»ից դրական օրինակներ քաղելով հանդերձ, զարգացման սեփական ուղի ընտրել: Նրանք չէին ցանկանում լինել Թուրքիայի ենթակայութեան տակ գտնուող երկրներ եւ նախընտրեցին Արեւմուտքի, Ռուսաստանի ու այլ երկրների հետ տնտեսական եւ քաղաքական յարաբերութիւնները զարգացնել ինքնուրոյն³²: Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ Թուրքիան տնտեսապէս համեմատաբար թոյլ երկիր էր: Թուրքիայի տարածաշրջանային յաւակնոտ նախագծերը եւ նրա ջանքերը Կենտրոնական

Ասիայում եւ Հարաւային Կովկասում խափանուեցին Անկարայի սահմանափակ կարողութիւնների պատճառով³³:

Ռուսական զօրքերի առկայութիւնը Վրաստանում, Հայաստանում եւ Տաջիկստանում, հզօր տնտեսական լծակները՝ գազը եւ էներգակիրները, եւ նրա կարողութիւնը՝ վերահսկելու տարածաշրջանային հակամարտութիւնները, ստիպեցին տարածաշրջանի ղեկավարներին ուշադրութիւն դարձնել Ռուսաստանի ցանկութիւններին³⁴: Միւս կողմից, «թուրքական մոդէլ»ը կորցրեց իր գրաւչութիւնն ինչպէս յետխորհրդային հանրապետութիւնների, այնպէս էլ Արեւմուտքի համար: Թուրքական քաղաքական համակարգը, ի վերջոյ, այնքան էլ գրաւիչ չէր Կենտրոնական Ասիայի եւ Հարաւային Կովկասի ղեկավարների համար, որոնք քիչ շահ ունէին իրենց երկրներում խրախուսելու անելի լայն քաղաքական մասնակցութիւնը եւ բազմակարծութիւնը: Իր հերթին Արեւմուտքը հասկացաւ, որ իր սկզբնական մտավախութիւններն Իրանի ազդեցութեան առնչութեամբ չափազանցուած են³⁵:

Դ. ՊԱՆԹԻՐԻՔԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԹԻՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

1990ականների սկզբներին Թուրքիայի հարակովկասեան քաղաքականութեան կարեւոր բաղադրիչներից էր նաեւ ԽՍՀՄ փլուզմամբ Թուրքիայում նոր թափով սկիզբ առած պանթիւրքիզմի գաղափարախօսութեան դրսեւորումները: Մասնաւորապէս, 1990ականների սկզբներին Թուրքիայի մի շարք գիտնականներ, քաղաքագէտներ եւ որոշ պաշտօնատարներ յայտարարեցին պանթիւրքիզմի քաղաքականութեան իրականացման անհրաժեշտութեան մասին: Ըստ Այդըն Եալչինի, խորհրդային Միութեան փլուզումը եւ կոմունիզմի վարկաբեկումն «ապահովել են հասարակական մտքի աջակցութիւնը պանթիւրքիզմին»³⁶:

Յատկանշական է, որ Թուրքիայի դիւանագիտական շրջանակներն անելի զգուշօրէն էին ձեակերպում պանթիւրքիստական հայեցակարգի վերածնունդն՝ այն որակելով ոչ թէ սերտօրէն փոխկապուած թիւրքական քաղաքական միութիւն, այլ թիւրքական երկրների խումբ, որտեղ Թուրքիան

ունենալու էր տնտեսական եւ քաղաքական ղեկավարող դեր: Օրինակ, Թուրքիայի Արտգործնախարարութեան քարծրաստիճան պաշտօնատար Բիլալ Սամջրը անդրադառնալով նօսականթիւրքիզմի գաղափարին, նշել էր, որ այն կարող էր յանգեցնել Սկանդինաւեան Միութեան, Արաբական Երկրների Լիգայի կամ Ամերիկեան Երկրների Կազմակերպութեան նման մի միութեան: Բնականաբար, Թուրքիան առաջատար դեր էր խաղալու նման կազմակերպութեան ձեւատրման հարցում: Ըստ նրա, ճիշտ չէր այն որակել պանթիւրքիզմ կամ ծաւալողապաշտութիւն, քանի որ, եթէ սկանդինաւները, արաբները եւ միւս ժողովուրդները ունեն նման միութիւն, ապա թիւրք ժողովուրդներին եւս դա կարելի է³⁷:

Աւելի արմատական երանգներ էին պարունակում թուրքական ծայրայեղ ազգայնականների եւ պանթիւրքիստների հրապարակումները, որոնց կարծիքով ԽՍՀՄ փլուզման արդիւնքում «թիւրքական աշխարհ»ի ծրագրերն իրական հեռանկարներ էին ստացել: Օրինակ կարող է ծառայել պրոֆեսոր Օզէյի գիրքը: Գրքում հեղինակը տալիս է թիւրքական աշխարհի ընդարձակ բացատրութիւնը, նրա աշխարհաքաղաքական առանձնայատուկ նշանակութիւնը ներկայում եւ ապագայում: Ըստ Օզէյի հաշուարկների, «թիւրքական աշխարհ»ի բնակչութեան ընդհանուր թիւը կազմում է 250 մլն., որոնց գերակշիռ մեծամասնութիւնը բնակեցուած է եւրասիական տարածաշրջանի տարածքներում՝ Ադրիատիկից մինչ Չինաստան: Օզէյը նաեւ ընդգծում է «թիւրքական աշխարհ»ի աշխարհաքաղաքական մեծ նշանակութիւնը եւ շեշտում, որ Թիւրքական Միութեան (Türk Birliği) գաղափարը պաշտպանում են ոչ միայն յետխորհրդային թիւրքական հանրապետութիւնների ղեկավարները, այլեւ՝ «թիւրքական աշխարհի ժողովուրդները»³⁸: Ըստ էութեան, «թուրքական մոդէլ»ի քաղաքականութիւնը պանթիւրքիզմի նորագոյն դրսեւորումներից էր, որը Թուրքիան իրականացնում էր բացայայտ, եւ նրա շրջանակները ընդգրկում էին ԱՊՀ նորանկախ թիւրքալեզու մահմեդական հանրապետութիւնները:

Պանթիւրքիզմի քաղաքականութեան իրականացման մէջ առանձնայատուկ կարեւորութիւն էին ներկայացնում նաեւ

Ռուսաստանի մաս կազմող ինքնավար մահմեդական հանրապետությունները³⁹:

Թուրքիայի որոշ շրջանակներ աշխուժ քայլեր էին ձեռնարկում ուժեղացնելու իրենց ազդեցությունը Ռուսաստանի մաս կազմող մահմեդական շրջաններում, մասնաւորապէս՝ Թաթարստանում, Բաշկորտոստանում, Եակուտիայում եւ յատկապէս հիւսիսկովկասեան հանրապետություններում: Մասնաւորապէս, թուրքական յատուկ ծառայություններն ու պանթիւրքիստական կազմակերպությունները հսկայ ջանքեր էին գործադրում՝ իրականացնելու տարածաշրջանային համարկման տարբեր նախագծեր՝ «Կովկասեան միութիւն», «Կովկասի իսլամական համադաշնութիւն», «Կովկասեան տուն», որի գլխաւոր նպատակն էր ստեղծել Ռուսաստանի կազմից դուրս Հիւսիսկովկասեան համադաշնութիւն կամ միութիւն: «Կովկասեան միութեան» գաղափարը նպատակ էր հետապնդում ստեղծելու միութիւն, որի մէջ ընդգրկուելու էին Ադրբեջանը, Վրաստանը եւ հիւսիսկովկասեան հանրապետությունները: Այս նախագծում մասնակցում էին պաշտօնական Բաքուի եւ Թբիլիսիի առաջին դէմքերը, նրանց մերձաւոր շրջապատը եւ ադրբեջանական ու վրացական յատուկ ծառայությունները⁴⁰:

Թէեւ Թուրքիան պաշտօնական մակարդակով յայտարարում էր, թէ չի աջակցում պանթիւրքիզմի դրսեւորումներին, սակայն, դա իրականութեանը չէր համապատասխանում: Օրինակ, 1993ին Թուրքիայում Թիւրքական Պետությունների եւ Համայնքների Ընկերակցութեան, Եղբայրութեան եւ Համագործակցութեան Հիմնադրամի (TÜDEV) ֆինանսաւորմամբ Անկարան կազմակերպեց թիւրքական պետությունների եւ համայնքների հաւաքները: Այդ պանթիւրքական ժողովին մասնակցելու համար Թուրքիա էին ժամանել պատուիրակություններ ոչ միայն Հիւսիսային Կիպրոսից, Կենտրոնական Ասիայից եւ Անդրկովկասից, այլ նաեւ՝ Ռուսաստանի Դաշնութեան թիւրքալեզու հանրապետություններից՝ Թաթարստանից, Բաշկորտոստանից, Եակուտիայից⁴¹: Թէեւ այս ժողովները ոչ-պաշտօնական բնոյթ էին կրում եւ չէին արտօնուել Թուրքիայի Արտգործնախարարութեան կողմից, սակայն թուրքական ազդեցիկ քաղաքական գործիչները - ներառեալ նախագահ

Օգալը, վարչապետ Դեմիրելը եւ ԱԳ նախարար Թանսու Չիլլերը - հարկ համարեցին ներկայ գտնուել այդ ժողովներին եւ ելույթ ունենալ: Յիշարժան են յատկապես 1994ին Թուրքիայի նախագահ Դեմիրելի խօսքերը. «Երկար տարիների ընթացքում մենք կիսում էինք Ռուսաստանի գերիշխանության տակ գտնուող եղբայրական երկրների ճակատագիրը: Ռուսական գերիշխանությանից ազատուած ժողովուրդները պետք է դռան վաստակած անկախության համար: Թուրքիայի հետաքրքրությունը տարածաշրջանային գործերում ելնում է «թիրքական հասարակության» իրավիճակի հանդէպ նրա խորը պատասխանատուութիւնից»⁴²:

Յատկանշական է, որ բացի Ռուսաստանից, Հարաւային Կովկասում Թուրքիան իր պանթիւրքիզմի քաղաքականութեան իրականացման գլխատր խոչընդոտ համարում էր Հայաստանը: Թուրքիան Հարաւային Կովկասում իր դիրքերն ամրապնդելու եւ Ադրբեջանը որպէս ցատկահարթակ օգտագործելու միջոցով Կենտրոնական Ասիա ներթափանցելու խնդիր ունէր՝ թիրքալեզու հանրապետութիւնների տնտեսական, քաղաքական եւ մշակութային միութիւն ձեւաւորելու հեռահար նպատակով: Ուստի, Հայաստանն իր գոյութեամբ նրա երկարաժամկէտ շահերի խոչընդոտ համարուեց⁴³:

Դեռեւս պանթիւրքիզմի հիմնադիրներից Եուսուֆ Աքչուրան Հայաստանը նոյնացնում էր «թմբի» հետ: 1920 Յունուարի 29ին Աքչուրան Ստամբուլի Համալսարանում ներկաներին դիմելիս, պատճառաբանելով, թէ դաշնակիցները նրան իբրեւ թումբ ուզում են կանգնեցնել երկու եղբայր ժողովուրդների՝ Անատոլիայի եւ Կովկասի թրքութեան միջեւ, կոչ էր անում. «պետք է ոչնչացնել Հայաստանը»⁴⁴:

Հայաստանը եւ Արցախը, որպէս «Մեծ Թուրան» պետութեան գլխատր խոչընդոտ էր համարում նաեւ ադրբեջանցի Նեսիբ Նեսիբգադէի կողմից առաջ քաշուած «*Ադրբեջանի առաքելութիւնը Նոր Թուրանի սրտեղծման տեսանկիւնից*» նէօ-թուրանիզմի հայեցակարգում, որտեղ հեղինակը նշում էր, որ Նոր Թուրանում ամենակարեւոր դիրքը պատկանում էր Ադրբեջանին, քանի որ այն գտնուում էր «Թուրանի սրտում»: Հետեւաբար, Ադրբեջանին սպառնացող վտանգը սպառնալիք էր

ապագայ Թուրան պետության համար: Ուստի պետք էր կանխել Արցախի անջատումն Ադրբեջանից եւ խանգարել Հայաստանի ուժեղացմանը տարածաշրջանում⁴⁵:

Թիւրքական աշխարհի ներսում Ադրբեջանի կարեւորութեանն է անդրադարձել նաեւ թուրք հեղինակ Մուզաֆէր Օզդաղը: Ըստ հեղինակի, աշխարհի թուրքախօս բնակչութեան մօտ 80%-ը բնակւում է Թուրքիա-Ադրբեջան-Թուրքեստան շրջանում: Այստեղ թուրքախօս բնակչութեան թիւը հասնում է մօտ 130 միլիոնի: Թուրքիան եւ Թուրքեստանը թիւրքականութեան երկու ուժային թելերն են, իսկ Ադրբեջանը հանդիսանում է այս երկուսը միաւորող սրբազան կամուրջ⁴⁶: Նա նաեւ նշում է, որ իրենց համար գոյութիւն չունի թիւրքականութիւնից դուրս, թիւրքական աշխարհին օտար ազգերի ազգ, այլ իրենց համար գոյութիւն ունի փառաւոր անցեալ եւ փայլուն ապագայ ունեցող, մեծ թիւրքական ազգի երկիր հանդիսացող եղբայրական Ադրբեջան⁴⁷:

Այսպիսով, Հայաստանը իր գոյութեամբ խոչընդոտ էր հանդիսանում թիւրքալեզու ժողովուրդների միաւորման թուրքական տրամաբանութեանը: Սակայն այստեղ հարցը միայն թուրքերի ադրբեջանցիներից տարանջատուելը չէր, այլեւ՝ Հարաւային Կովկասում Ռուսաստանի թուլացման ամերիկեան ծրագրերն էին, որոնց իրականացման գործում Թուրքիան մեծ պատրաստակամութիւն էր յայտնել:

Պանթիւրքիզմի նմանատիպ դրսեւորումների կապակցութեամբ թուրքական *Միլլիէթ* թերթին տուած հարցազրոյցում Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ալբերտ Չերնիշեւը, անդրադառնալով Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում Թուրքիայի ազդեցութեան ուժեղացմանը եւ պանթիւրքիզմի դրսեւորումներին, նշեց, որ Ռուսաստանը նորմալ է վերաբերում այդ երկրների հետ Թուրքիայի յարաբերութիւնների զարգացմանը: Սակայն այդ յարաբերութիւնների զարգացումը չպէտք է տեղի ունենայ պանթիւրքիզմի շրջանակներում: Եթէ Թուրքիայի եւ այդ հանրապետութիւնների միջեւ յարաբերութիւնները զարգանային ըստ միջազգային կանոնակարգերի ու չափանիշների, անհանգստութեան որեւէ պատճառ չէր լինի⁴⁸:

Ե. ԹՈՒՐԲ-ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԱՐԱԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԿԱՐԵՒՐ ԲԱՂԱԴԻՉ

Թուրքիայի հարակովկասեան քաղաքականութեան կարեւոր բաղադրիչներէից էր թուրք-ադրբեջանական յարաբերութիւնները: Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մուֆախիբովի նախագահութեան օրօք (1990-1992) թուրք-ադրբեջանական յարաբերութիւններն այդքան էլ հարթ չէին ընթանում: Մուֆախիբովի նախագահութեան ժամանակ Թուրքիան թէեւ աջակցում էր Ադրբեջանին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան ընթացքում, սակայն դժգոհ էր նրա վարած արտաքին քաղաքականութենից, մասնատրապէս նրա ռուսամէտ դիրքորոշումից⁴⁹: Իրավիճակը փոխուեց 1992 Մարտի 6ին Մուֆախիբովի հրաժարականից յետոյ, ինչի արդիւնքում 1992 Յունիսին Ադրբեջանում իշխանութեան եկաւ Աբուլֆէզ Էլչիբէյը, որն էլ թուրք-ադրբեջանական յարաբերութիւնների ընդլայնման եւ ամրապնդման համար կարեւոր գործօն հանդիսացաւ⁵⁰:

Նրա ժամանակ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ ձեռք բերուեց սկզբունքային պայմանաւորութիւն Բաքու-Ջէյհան նաւթատարի կառուցման վերաբերեալ: Նախագահ ընտրուելուց յետոյ Էլչիբէյն սկսեց վարել խիստ թուրքամէտ եւ ընդգծուած հակառուսական քաղաքականութիւն: Նա իրեն համարում էր պանթիւրքիզմի գաղափարակիր եւ թուրք-ադրբեջանական սերտ յարաբերութիւնների կողմնակից⁵¹:

Ադրբեջանի նկատմամբ Թուրքիայի իշխանութիւնների ջերմ վերաբերմունքը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ Ադրբեջանը կարեւոր տեղ էր զբաղեցնում պանթիւրքիզմի եւ «թուրքական մոդէլ»ի քաղաքականութեան գործընթացում. Թուրքիայի համար խիստ կարեւոր նշանակութիւն ունէր նաեւ ադրբեջանական նաւթը, որի նկատմամբ մեծացել էր Թուրքիայի եւ Արեւմուտքի հետաքրքրութիւնը:

Էլչիբէյի հակառուսական տրամադրութիւնն էապէս նպաստում էր Ադրբեջանում Թուրքիայի ազդեցութեան ամրապնդմանը: Օրինակ, 1992ին դեռեւս լինելով նախագահի թեկնածու՝ Էլչիբէյը յայտարարել էր, որ Ադրբեջանը չի անդամակցելու ԱՊՀին: 1992 Հոկտեմբերին Ադրբեջանի

խորհրդարանը միաձայն դեմ քուժարկեց ԱՊՀ-ին Ադրբեջանի անդամակցութեանը⁵²:

1993 Յունիսի 4ին Էլչիբեյի հրաժարականից յետոյ իշխանութեան եկած Հէյդար Ալիեւի օրօք ադրբեջանական ղեկավարութիւնը որոշակի շտկումներ մտցրեց չափից աւելի միակողմանի թուրքամէտ արտաքին քաղաքականութեան մէջ՝ դադարեցնելով մի շարք նախային պայմանագրերի իրագործումը, որոնցում արեւմտեան նախային ընկերութիւնները գերակշռող դիրք էին գրաւում: Աւելին, Ադրբեջանն ընդգրկուեց ԱՊՀ կազմում⁵³:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Խորհրդային Միութեան փլուզումը Թուրքիային նոր ռազմավարական հնարատրութիւններ ընծեռեց: Թուրքիան սկսեց աշխուժ քայլեր ձեռնարկել՝ ներթափանցելու Հարաւային Կովկաս, որը աշխարհաքաղաքական եւ տնտեսական մեծ կարեւորութիւն էր ներկայացնում իր համար՝ դիտարկուելով նաեւ որպէս իւրատեսակ կամուրջ դէպի Կենտրոնական Ասիայի թիրքական նորանկախ հանրապետութիւնները:

2. Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում իր քաղաքականութիւնն իրականացնելիս Թուրքիան ստացաւ Արեւմուտքի եւ մասնաւորապէս ԱՄՆի աջակցութիւնը, ինչը պայմանաւորուած էր Արեւմուտքի կողմից վերոյիշեալ տարածաշրջաններում Ռուսաստանի աշխարհաքաղաքական գերակայութեան վերականգնման բացառման քաղաքական ուղու իրականացմամբ:

3. Չնայած 90ականների հենց սկզբից թիրքալեզու երկրների միջեւ մերձեցման մեծ ներուժին եւ ձգտումներին. վերջիններս, այնուամենայնիւ, գերադասեցին «թուրքական մոդել»ից դրական օրինակներ քաղելով հանդերձ, զարգացման սեփական ուղի ընտրել:

4. «Թուրքական մոդել»ի ծախողմանը մեծապէս նպաստեց նաեւ Ռուսաստանի աշխուժ ներգրաւածութիւնը եւ ԱՊՀ երկրներում ազդեցութեան ընդլայնման ուղղուած քայլերը: Հարաւային Կովկասում իր դիրքերը վերականգնելու համար Ռուսաստանը օգտագործեց տարածաշրջանային

հականարտությունները:

5. «Թուրքական մոդել»ը կորցրեց իր գրաչութիւնը նաեւ Արեւմուտքի համար:

6. Թուրքիայի հարակովկասեան քաղաքականութեան կարեւոր բաղադրիչներից էր Ադրբեջանը, որը հանդիսանում էր հարակովկասեան տարածաշրջանում Թուրքիայի ամենասերտ դաշնակիցը:

7. Թուրք-ադրբեջանական յարաբերությունների ընդլայնման եւ ամրապնդման համար առանձնակի կարեւոր գործոն հանդիսացաւ Էլչիբեյի գլխաւորութեամբ «Ազգային ճակատ»ի իշխանութեան գալը:

8. Թուրքիայի հարակովկասեան քաղաքականութեան կարեւոր գործոններից էր նաեւ ԽՍՀՄ փլուզման հետեւանքով Թուրքիայում նոր թափով վերսկսած պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնը:

9. Թուրքիան Հարաւային Կովկասում իր դիրքերն ամրապնդելու եւ Ադրբեջանը որպէս ցատկահարթակ օգտագործելու միջոցով Կենտրոնական Ասիա ներթափանցելու խնդիր ունէր՝ թիրքալեզու հանրապետությունների տնտեսական, քաղաքական եւ մշակութային միութիւն ձեւաւորելու հեռահար նպատակով:

10. Ռուսաստանից բացի Հարաւային Կովկասում Թուրքիան իր պանթիւրքիզմի քաղաքականութեան իրականացման գլխաւոր խոչընդոտ համարում էր Հայաստանը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ T. Torosyan, "The Return of Turkey," *Russia in Global Affairs*, № 3, July-September 2009, էջ 124. նաեւ՝ Գրիգոր Արշակեան, Ա. Եղիազարեան, «Թուրք-Ադրբեջանական Ռազմաքաղաքական Յարաբերությունները 1991-2001թթ.», 21-րդ Դար, թիւ 5 (45), 2012, էջ 34:

² Գրիգոր Արշակեան, *Թուրքիայի Քաղաքականութիւնը Հարաւային Կովկասում 1991-2001թթ.*, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2009, էջ 13:

³ H. Kramer, "Will Central Asia become Turkey's Sphere of Influence", *Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996, էջ 3:

⁴ E S. Cornell, *The Nagorno-Karabakh Conflict*, Department of East European Studies, Uppsala University, 1999, էջ 64:

- ⁵ K. S. Gadjev, *Geopolitika Kavkaza* (Կովկասի աշխարհաքաղաքականությունը), Մոսկուա, Mejdunarodnaya Otnosheniya Հրատ., 2003, էջ 346:
- ⁶ S. Sayari, "Turkey: The Changing European Security Environment and the Gulf Crisis", *Middle East Journal*, Vol. 46, No 1, Winter 1992, էջ 11:
- ⁷ B. Oran, "The Turkish Approach to Transcaucasia and Central Asia", Ole Hoiris and Sefa Martin Yürükel (eds.), *Contrasts and Solutions in the Caucasus*, Aarhus, Aarhus University Press, 1998, էջ 462:
- ⁸ Z. Avşar, Ferruh Solak, *Türkiye ve Türk Cumhuriyetleri* (Թուրքիան եւ Թուրքիոյ Հանրապետությունը), Ankara, 1994, էջ 7:
- ⁹ Oran, էջ 463:
- ¹⁰ Աւելի մանրամասն տե՛ս՝ Z. Brzezinski, *Velikaya Shakhmatnaya Doska* (Շախմատային մեծ խաղատախտակ), Մոսկուա, Mejdunarodnaya Otnosheniya Հրատ., 1998, էջ 161:
- ¹¹ R. Safrastyan, "Ob Ideologicheskome Obosnovanii Regionalnoy Politiki Turtsii: Kontseptsia Yevrazia-Yujni Kavkaz," *Regionalnaya Bezopasnost i Stabilnost, Materiali Konferentsii* («Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության գաղափարական հիմնադրման շուրջ: Եւրասիա-Հարավային Կովկաս հայեցակարգ». տարածաշրջանային անվտանգություն եւ կայունություն համաժողովի նիստեր), ընդհ. հմք.՝ Գայիանէ Նովիկովա, Երեւան, Ամրոց Գրուպ Հրատ., 2004, էջ 70-71:
- ¹² Նոյն, էջ 72:
- ¹³ O. Kodjaman, *Yujnii Kavkaz V Politike Turtsii i Rossii V Postsovetitskii Period*, (Հարավային Կովկասը Թուրքիայի եւ Ռուսաստանի քաղաքականության մէջ յետխորհրդային ժամանակահատուծում), Մոսկուա, Ruskaya Panorama Հրատ., 2004, էջ 85:
- ¹⁴ A. Karaosmanoğlu, *Turkey's Objectives in the Caspian Region, The Security of the Caspian Region*, Oxford, University Press, 2001, էջ 151. Նաեւ՝ M. Aydin, "Ethnic Conflict and Security in Central Asia and Caucasus: The Role of Turkey", *Marco Polo Magazine*, Vol. 3, 1998, էջ 45. Նաեւ նոյնի՝ "Turkish Foreign Policy: Framework and Analysis," *Stratejik Arastirmalar Merkezi*, Ankara, 2005, էջ 63:
- ¹⁵ E. Oorazova, *Ekonomicheskoe Sotrudnichestvo Turtsii i Turtsikh Gosudarstv SNG*, (Թուրքիայի եւ ԱՊՀ թիւրքալեզու երկրների միջեւ համագործակցությունը), Մոսկուա, ASTI-Հրատ., 2003, էջ 22-23:
- ¹⁶ Gadjev, էջ 347:
- ¹⁷ J. Naegele, "Turkey: Foreign Policy Objectives", Part Two, RFE/RL, 13.08.1998, www.binfo.com/places/Bulgaria/news/98-08/aug13b.rfe ; *Turkish Daily News*, 05.06.1992:
- ¹⁸ D. Pipes, *The Event of Our Era*, New York, Council on Foreign Relations Press, 1994, էջ 16. Նաեւ՝ M. G. Winrow, "Turkey's Relations with the Transcaucasus and the Central Asian Republics," *Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996, էջ 136:

- ¹⁹ Ա. Յովհաննիսեան, «ԽՍՀՄի Փլուզումը, Դժուրը Միասնության՝ Գաղափարը Եւ Ղարաբաղեան Հարցը (1990-1995ականների Դժուրքական Հրապարակումների Լուսարանմամբ)», *Մերձատր Եւ Միջին Արեւելքի Երկրներ Եւ Ժողովուրդներ*, թիւ 20, Երեւան, «Զանգակ-97», 2001, էջ 76:
- ²⁰ Նոյն, էջ 77:
- ²¹ «Դժուրքական մոդէլ»ի գաղափարն առաջ է քաշուել ԱՄՆ պետքարտուղար Ջէյմս Քլեյքըրի կողմից: Նա 1992ի սկզբներին Կենտրոնական Ասիայի երկրները այցելութեան ժամանակ նորանկախ հանրապետութիւնների ղեկավարներին խորհուրդ է տալիս օգտագործել «թուրքական մոդէլը» իրենց երկրների քաղաքական եւ տնտեսական զարգացման համար: Սակայն պէտք է ընդգծել, որ «թուրքական մոդէլ»ի ռազմավարութեան հեղինակն իրականում ամերիկեան RAND վերլուծական կենտրոնի առաջատար մասնագէտներից Պրոֆ. Գրեմ Ֆուլլըն էր: Շուտով «թուրքական մոդէլ»ին իրենց աջակցութիւնը յայտնեցին նաեւ ԱՄՆ եւ եվրոպական այլ բարձրաստիճան պաշտօնեաներ (Kramer, էջ 2. նաեւ՝ Ռ. Սաֆրաստեան, «Ռուսաստանը Եւ Դժուրքիան Հարաւային Կովկասում. Աշխարհառազմավարական Զինադադար», *21-րդ Դար*, 2005, No. 4, էջ 36. նաեւ՝ I. Bal, "The Turkish Model and the Turkic Republics," *Perceptions: Journal of International Affairs*, September-November 1998, էջ 5):
- ²² Kramer, էջ 2:
- ²³ M. G. Winrow, "Turkey and the Newly Independent States of Central Asia and Transcaucasus," *Middle East Review of International Affairs Journal* (MERIA), Volume 1, No. 2 - July 1997, էջ 6:
- ²⁴ Արշակեան, էջ 24:
- ²⁵ A. Kuratov, "Turksia I Turkoyazichniye Gosudarstva Tsentralnoy Azii: Lyubov Po Raschetu?" (Դժուրքիա եւ Կեդրոնական Ասիոյ թիւրքախօս պետութիւնները. սեր՝ ըստ հաշիւի)՝ *Rosiya I Turtsia Na Poroge XXI Veka: Na Puti V Evropu Ili V Evrazyu?* (Ռուսաստան եւ Դժուրքիա. 21րդ դարի շեմին. Ճանապարհ դէպի Եվրոպա՞, թէ՛ Եւրասիա), էջ 24. նաեւ՝ Z. Onis, "Turkey and the Post-Soviet States: Potential and Limits of Regional Power," *MERIA*, Volume 5, No. 2, June 2001, էջ 2:
- ²⁶ A. Svarants, *Panturkizm V Geostrategii Turtsii V Kavkaze*, (Պանթիւրքիզմը Դժուրքիայի աշխարհառազմավարութեան մաս Կովկասում), Մոսկուա, Gumanitarii Հրատ., 2002, էջ 170:
- ²⁷ S. Bilge, "An Analysis of Turkish-Russian Relations," *Perceptions: Journal of International Affairs*, Volume II, June-August 1997, էջ 10:
- ²⁸ ITAR-TASS, 30.08. 1995:
- ²⁹ A. Dawisha and K. Dawisha, *The Making of Foreign Policy in Russia and the New States of Eurasia*, New York, ME. Sharpe, 1995, էջ 96-97:
- ³⁰ Z. Brzezinski and P. Sullivan, *Russia and Commonwealth of Independent States: Documents, Data, and Analysis*, New York, ME. Sharpe, 1997, էջ 145-146:

- ³¹ I. Tuncer, "The Security Policies of the Russian Federation: The 'Near Abroad' and Turkey," *Turkish Studies*, vol 1, No 2, Autumn 2000, էջ 100. նաև՝ Cornell, էջ 49:
- ³² I. Torbakov, Ankara's Post-Soviet Efforts in the Caucasus and Central Asia: The Failure of the "Turkic World" Model, www.eurasianet.org/departments/insight/articles/eav122602_pr.shtml :
- ³³ M. Aydın, "Turkey and Central Asia: Challenges of Change," *Central Asian Survey*, Vol. 15, 1996, էջ 158:
- ³⁴ Kodjaman, էջ 161:
- ³⁵ Onis, էջ 4:
- ³⁶ Kodjaman, էջ 87:
- ³⁷ Նոյն:
- ³⁸ R. Özey, *Dünya Platformunda Türk Dünyası*, (Համաշխարհային հարթակի թուրքական աշխարհը), İstanbul, 1999, «Aktif Yayınevi», էջ 22-23:
- ³⁹ Svarants, էջ 301:
- ⁴⁰ Նոյն, էջ 165.
- ⁴¹ Winrow, *Turkey and Newly Independent States...*, էջ 4:
- ⁴² *Nezavisimaya Gazeta*, 10.03.1996:
- ⁴³ Յ. Չաքրեան, «Հայ-Թուրքական Յարաբերությունները Մերձատուր Եւ Միջին Արեւելքի Քաղաքական Զարգացումների Ենթատեքստում», *21-րդ Դար*, 2003, No. 1, էջ 101:
- ⁴⁴ Զարեանդ, *Միացեալ Անկախ Թուրանիա*, Երեւան, Հայաստան Հրատ., 1993, էջ 119:
- ⁴⁵ Յովհաննիսեան, էջ 78-79:
- ⁴⁶ M. Özdag, *Türkiye ve Türk Dünyası Jeopolitiği* (Թուրքիան եւ թիւրքական աշխարհի աշխարհաքաղաքականութիւնը), Ankara, «Avrasya-Bir Vakfi Yayinlari», 2003, էջ 295:
- ⁴⁷ Նոյն, էջ 297:
- ⁴⁸ *Milliyet*, 26.04.1993:
- ⁴⁹ P. İpek, "Azerbaijan: Oil Boom and Challenges," *Turkey's Neighborhood*, Mustafa Kibaroglu (ed.) Ankara, Foreign Policy Institute, 2008, էջ 113:
- ⁵⁰ S. Goldenberg, *Pride of Small Nations: The Caucasus and Post-Soviet Disorder*, Zen Books, London, 1994, էջ 119-120:
- ⁵¹ E. G. Fuller, *Turkey Faces East: New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union*, Santa Monica, RAND, 1992, էջ 56. նաև՝ Svarants, էջ 167:
- ⁵² Kodjaman, էջ 114:
- ⁵³ T. Goltz, "Letter From Eurasia: The Hidden Russian Hand," *Foreign Policy*, No. 92, Fall, 1993, էջ 95-97:

THE DISINTEGRATION OF THE USSR AND
TURKEY'S SOUTH CAUCASUS POLICY IN THE 1990S

(Summary)

GRIGOR ARSHAKIAN
garshakyan@mail.ru

The disintegration of the Soviet Union opened new geostrategic possibilities for Turkey. Turkey started to take active step to penetrate the South Caucasus. The region had both geopolitical and economic importance for Turkey. Moreover, it was the bridge that linked Turkey to the newly independent Turkic states of Central Asia.

For Turkey to implement its Caucasian and Central Asian policies it needed the support of the West. This support was granted as long as Turkey's policies served the interests of the West in undermining Russia's influence in the region. Thus, it came with no surprise that as of the 1990s, many of these Turkic states tried to adopt the "Turkish model" as a state building track.

However, the Turkish policy was opposed by Russia, which considered these states to fall within her zone of influence. Soon Russia initiated the Commonwealth of Independent States (CIS) and enhanced her influence by stepping in as mediator in the conflicts that flared up the region.

The article analyses the attempts of Turkey in enlarging its influence in the region, the factors and means it used to materialize its policy, the role of Azerbaijan in this process, and the support and backing it received from the West on the one hand and the steps taken by Russia to counter and foil the Turkish policy.